# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

N Ե- 01/335

«22» Դեկտեմբերի 2020թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ղեկավարի 2020թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 38-Ա և 39-Ա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե գ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» Դեկտեմբերի 2020 թվականի N 38-Ա

## « ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-Ի ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏԸ ԺԱՄԸ 24.00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «բ» ենթակետով , համաձայն Ձորագետ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 34-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի «բ» կետով, հիմք ընդունելով «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի հայտը,

Ո ր ո շ ու մ ե մ.

1 Ձորագետ համայնքի վարչական տարածքի 1փողոց 127 հասցեում գործող «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ00066784/ հայտը բավարարել և նրան տալ հանրային սննդի օբյեկտը ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 21

հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«21» դեկտեմբերի 2020 թվականի N 39-Ա

## «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,« Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով,համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 4-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 34-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի հայտը,

Ո ր ո շ ու մ ե մ.

1 «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ00066784/ տալ թույլտվություն Ձորագետ համայնք 1 փողոց 127 հասցեում գործող հյուրանոցային համալիրի 198քմ մակերեսով տարածքում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքով :

2. 2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 21

հ. Ձորագետ